ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ՝ ՈՒՂՂՅԱԼ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

(1977 թ. փետրվարի 7)

Սուրբ Էջմիածնեն և Մեր սրտեն ձեզի ամենուդ հայրական սիրո ողջույն և օրհնություն, բարի մաղթանքներով հանդերձ ձեր հոգեշեն աշխատանքներու լիակատար հաջողության համար:

Կհրճվի Մեր հոգին ամեն անգամ երբ գրիչը ձեռք կառնենք ձեր համագումարներուն առաքելու համար Մեր ողջույնը, Մեր սրտի խոսքը:

Կհրճվի Մեր հոգին, այո, որովհետև քաջ գիտենք թե ձեր համագումարներու նպատակն է հոգևոր շինությունը Մեր ամերիկահայ զավակներուն և անոնց կյանքին մեջ անխառն պահպանումը հայկական ազգային ոգեկանության:

Հայոց Հայրապետը Իր հոգվո հայացքը ձեր վրա սևեռած, լավատեսությամբ կսպասե որ դուք բոլորդ՝ ուխտապահ սպասավորներ Հայաստանյայց եկեղեցվո, սուրբ Հոգիով լեցված, կարգապահ շարքերով նվիրվիք ձեր առաքելության՝ աներեր ու անշփոթ, ղեկավարությանը ներքև ձեր թեմակալ առաջնորդ սրբազան Հոր:

Ամուր կանգնած մեր նախնյաց լույս հավատքի վեմին վրա, լավատես դեպի հայ ժողովուրդի ապագան, մի տարվիք շփոթեցուցիչ մտածումներե և հոսանքներե: Վճիտ ու անաղարտ պահպանեցեք մեր ժողովուրդի հոգին, իր քրիստոնեական և հայկական ազգային արժեքներով, որոնք անցնող դարերու նվիրական ժառանգությունը կհանդիսանան մեր ազգին: Այս է, այս պետք է ըլլա ձեր բոլորի հիմնական և տևական մտահոգությունը, ձեր բոլորի հիմնական ու տևական մտասևեռումը, ձեր բոլորի հովվական գործունեության առանցքը:

Գիտենք թե այս ճանապարհը դժվարին է և հաճախ տառապալից, անհաղթահարելի թվացող արգելակիչ պայմաններու առջև, սակայն այս է որ կապասվի ձեզմե, այս է ձեր աշխատանքի ճամփան, որով դուք պիտի կարողանաք փրկությյան ափին բերել մեր պանդուխտ ժողովուրդը: Այս է ձեր իրավ փառքի ճամփան:

Թող Աստված շեն ու լուսառատ պահպանե ձեր աղոթքի Տուները:

Թող Աստված անփորձ ու անվտանգ, մեկ ու անբաժան պահպանե համայն հայ հավատացյալ ժողովուրդը հԱմերիկա:

Թող Աստված նոր ներշնչումներ, հոգատարություն ու գործելու անսպառ եռանդ պարգևե ձեզի բոլորիդ, այժմ և միշտ:

«Ո՞վ իցէ իմաստուն և հանճարեղ ի ձեզ, ցուցցէ ի բարուք գնացից զգործս իւր հեզութեամբ իմաստութեանն» (Հակոբ. առաք. Գ. 13). ամեն: